



## e-Guillotine

բիզնես գործընթացների և դրանք սահմանող իրավական ակտերի  
ՇՏԵՄԱՐԱՆ

# Իրավական ակտի վերանայման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մայիս, 2013

## Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ.....	2
2. Իրավական ակտերի վերանայման փուլի նկարագրություն .....	2
3. Իրավական ակտերի վերանայման շրջանակները .....	3
4. Վերանայման գործընթաց.....	6
5. Վերանայման գործընթացի քայլերը .....	6
6. Հավելված 1. Իրավական ակտի վերանայման ստուգաթերթ.....	12
7. Հավելված 2: Վերանայման փուլին վերաբերող կարևոր գործողություններ և խնդիրներ .....	32

### 1. Ընդհանուր դրույթներ

Սույն ձեռնարկն օջանդակում է Հայաստանի Հանրապետությունում Օրենսդրության Կարգավորման Ազգային Կենտրոնին Կարգավորիչ գիյոտինի իրականացման գործում՝ ներգրավվելով բոլոր կարգավորող մարմիններին և շահագրգիռ կողմերին: Սա ազգային նախագիծ է, որի նպատակն է բարելավել բիզնեսների, քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների կյանքի և գործունեության պայմանները: Օրենսդրության բարելավումը կխթանի տնտեսական աճը և կօգնի ՀՀ կառավարությանը հասնել իր նպատակներին ավելի ցածր ծախսերի հաշվին:

### 2. Իրավական ակտերի վերանայման փուլի նկարագրություն

Կառավարության Բարեփոխումների խորհուրդը նպատակադրել է բիզնեսներին վերաբերող, ինչպես նաև այլ կարգավորումների հետևանքով ծագող ծախսերի 50%-ով կրճատում՝ մի շարք խոչընդոտների, բարդությունների և ավելորդ սահմանափակումների վերացման միջոցով: Սույն հավակնոտ թիրախին հասնելու համար անհրաժեշտ է նախարարությունների, շահագրգիռ կողմերի, ՕԿԱԿ-ի, ինչպես նաև ՀՀ կառավարության ներգրավվածությունը: Ծախսերի նման էական նվազեցումը կնպաստի տնտեսական աճի խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աշխատավարձերի բարձրացմանը ՀՀ-ում: Սույն նախագիծը ՀՀ-ում վերջին տարիներին իրականացված միկրոտնտեսական և օրենսդրական կարևորագույն նախագծերից մեկն է:

Իրավական ակտերի վերանայման արդյունքում ներկայացվելու են հազարավոր առաջարկություններ՝ ուղղված բիզնես գործընթացների պարզեցմանը, ինչպես նաև իրավական ակտերի պահպանմանը կամ ուժը կորցնելուն: Այս առաջարկությունները կքննարկվեն ՀՀ կառավարության կողմից արագացված գործընթացով:

Վերանայման են ենթակա բոլոր իրավական ակտերն ու բիզնես գործընթացները՝ անկախ նրանց՝ պաշտոնական տեղեկագրում հրապարակված լինելու հանգամանքից: Սույն իրավական ակտերը պետք է մուտքագրվեն E-guillotine շտեմարան և հասանելի լինեն համացանցում յուրաքանչյուրի

համար: Թափանցիկության ապահովման համար բոլոր նյութերը հրապարակվելու են [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) կայքում: Ցանկացած անձ կարող է մասնակցել այս վերանայման գործընթացին կայքի միջոցով և արտահայտի իր տեսանկյունը:

Իրավական ակտերի գույքագրման գործընթացը ավարտվել է 2013թ. մայիսի 8-ին, սակայն իրավական ակտերի որոնման և շտեմարանում դրան մուտքագրման գործընթացը լինելու է շարունակական:


Վերանայման փուլում ձևավորվելու են իրավական ակտերի պարզեցմանը կամ ուժը կորցրած ճանաչելուն ուղղված առաջարկությունները: Թափանցիկ և ստանդարտացված իրավական ակտերի վերանայման գործընթաց ապահովելու նպատակով բոլոր փորձագետները կօգտագործեն իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը, ինչը հնարավորություն կտա հասկանալ, թե ինչպես կարելի է ապահովել պետական քաղաքականությանը համահունչ շուկայական հարաբերությունների համար ավելի արդյունավետ և բարենպաստ պայմաններ:

Իրավական ակտի վերանայման ստուգաթերթը իրենից ներկայացնում է մոտ 25 հարցից կազմված ստանդարտացված հարցաշար, որի հիման վրա կարգավորող մարմինները, շահագրգիռ կողմերը և ՕԿԱԿ-ը կորոշեն, թե արդյոք իրավական ակտերն ունե՞ն օրենսդրական ուժ, անհրաժե՞շտ են և անրաժեշտ ու խելամի՞տ են արդյոք սահմանված վճարները:

Բիզնես գործընթացները վերլուծելու և նրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մեկ այլ գործիք է բիզնես գործընթացի վերանայման ստուգաթերթը, որն իրենից ներկայացնում է ՕԿԱԿ-ի կողմից լրացմանը ենթակա ստանդարտացված հարցաշար՝ մեկից ավելի նախարարություններ ներգրավող բարդ բիզնես գործընթացները վերանայելու համար:


### 3. Իրավական ակտերի վերանայման շրջանակները

Հայաստանի Հանրապետությունում Կարգավորիչ գիյոտինի կենթարկվեն իրավական ակտերը և բիզնես գործընթացները:



Բիզնես գործընթացներին վերաբերող իրավական ակտերն են՝ օրենքները, որոշումները, հրամանները, կանոնակարգերը, հրահանգները:

### Իրավական ակտեր/Բիզնես գործընթացներ/Վարչական գործընթացներ



Սույն ձեռնարկի համատեքստում, իրավական ակտ է համարվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր նորմատիվ իրավական փաստաթուղթը, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ (վարքագծի կանոններ)՝ մեկից ավելի քաղաքացու կամ բիզնեսի կողմից որևէ տեսակի գործունեություն իրականացնելու նպատակով որևէ տեսակի գործողության իրականացման համար:

Պրակտիկայում թույլտվություն ձեռք բերելու համար գործարարը պետք է ձեռնարկի մի շարք քայլեր և ներկայացնի կարգավորող մարմնի կողմից սահմանված որոշակի տեղեկատվություն: Թույլտվություն ստանալու համար բիզնեսների կողմից կատարվող բոլոր գործողությունները համարվում են բիզնես գործընթացներ: Վերանայվելու է ցանկացած պահանջ բիզնեսների կամ քաղաքացիների նկատմամբ, ներառյալ էական պահանջները (օրինակ՝ բենզալցակայանները պետք է վերապատրաստեն աշխատակիցներին անվտանգության կանոնների գծով) և/կամ ընթացակարգային պահանջները (օրինակ՝ տվյալ բիզնեսով զբաղվելու համար պահանջվում է լիցենզիա):

Թույլտվություն տրամադրելու ընթացքում պետական մարմինը իրականացնում է մի շարք գործողություններ (տվյալ մարմնի ներսում կամ այլ պետական մարմինների հետ համագործակցելիս), որոնք սահմանված են յուրաքանչյուր մարմնի ընթացակարգերով և համապատասխան կանոնակարգերով: Բիզնես գործընթացը հնարավոր է փոփոխել նրա իրավական հիմքը հանդիսացող ակտի փոփոխման միջոցով:

- Վերանայման փուլը չի վերաբերում պետական կառավարման մարմինների ներքին կառավարմանը վերաբերող կարգերին և ընթացակարգերին, ինչպիսիք են՝ քաղճառայողների աշխատ

Շուկայական և բիզնես մթնոլորտի համար բարենպաստ պայմանների ապահովում: Իրավական ակտերը պետք է համապատասխանեն ազատ շուկայական հարաբերությունների հիմնական սկզբունքներին և առաջացնեն հնարավորինս քիչ ծախսեր նպատակին հասնելու համար: Այս հարցադրումները ներկայացված են ստուգաթերթի երրորդ հատվածում.

- Խելամտություն և վճարների անհրաժեշտություն: Բիզնեսների համար նախատեսված վճարները հարկադրման դեստրուկտիվ ձև են, քանի որ նրանք նպաստում են սկսնակ բիզնեսների և տնտեսական աճի նվազեցմանը, ինչպես նաև առաջացնում են կոռուպցիայի համար լծակներ: Վերանայման արդյունքում պարզ կդառնա, թե արդյոք սահմանված վճարները արդարացված են լավ բիզնես ծառայություն մատուցելու տեսակետից և խելամիտ են, այսինքն՝ արտացոլում են մատուցված ծառայությունների ինքնարժեքը, թե ոչ: Այս հարցադրումները ներկայացված են ստուգաթերթի չորրորդ հատվածում.
- Իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը ներկայացված է Հավելիված 1-ում:

Հաշվի առնելով նախարարություններից և շահագրգիռ կողմերից ստացված տեղեկատվությունը՝

իրավական ակտերի վերանայման փուլի արդյունքում ՕԿԱԿ-ի փորձագետները ձևավորելու են հստակ

առաջարկություններ համապատասխան իրավական ակտեր և բիզնես գործընթացը անփոփոխ թողնելու, պարզեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ: Այս առաջարկությունները խմբավորվելու են մի քանի մեծ փաթեթների մեջ և ներկայացվելու են Բարեփոխումների խորհրդի (որը նախագահում է ՀՀ վարչապետը) հաստատմանը, որից հետո բարեփոխումները իրագործվելու են հնարավորինս սեղմ ժամկետներում (10 շաբաթվա ընթացքում) և խիստ հսկողության ներքո: Իրագործման գործընթացին հնարավոր կլինի հետևել համացանցում, և բոլորը կկարողանան տեսնել, թե որ ոլորտներում է հաջողվել հասնել ծախսերը 50%-ով կրճատելու թիրախին:

Վերանայման մեթոդի հիմքում ընկած է որպես Կարգավորիչ գիլյոտին հայտնի առաջատար պարզեցման մեթոդը, որն արդեն կիրառվել է մի շարք երկրներում:

## 4. Վերանայման գործընթաց

Նախքան որեւէ առաջարկություն գրելը լիարժեք տեղեկատվություն ունենալու համար իրավական ակտերի վերանայման գործընթացը բաժանվում է երեք փուլերի, ինչն ապահովում է յուրաքանչյուր իրավական ակտի մանրակրկիտ վերանայումը:

1. Առաջին փուլում վերանայումը կիրականացնեն կարգավորող մարմինները՝ իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը լրացնելու միջոցով: Յուրաքանչյուր իրավական ակտի համար լրացվում է ստուգաթերթ, ձևավորվում է առաջարկ և ներկայացվում է ՕԿԱԿ-ին:


2. Երկրորդ փուլում վերանայումը իրականացվելու է շահառուների՝ հիմնականում գործարար և առևտրային միությունների կողմից՝ օգտագործելով իրավական ակտերի նույն վերանայման ստուգաթերթը : Բոլոր ստուգաթերթերը և առաջարկությունները ներկայացվում են ՕԿԱԿ-ին համացանցի կամ այլ միջոցով:

3. Վերանայման երրորդ վերջնական փուլն իրականացնելու է ՕԿԱԿ-ը՝ օգտագործելով իրավական ակտերի նույն վերանայման ստուգաթերթը: ՕԿԱԿ-ը կօգտագործի կարգավորող մարմիններից և շահառուներից ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև միջազգային փորձագետներից և այլ աղբյուրներից ստացված նյութերը, որոնց վերլուծության հիման վրա կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

## 5. Վերանայման գործընթացի քայլերը

Հետևյալ գծապատկերն արտացոլում է տեղեկատվության հոսքը իրավական ակտերի վերանայման ընթացքում:

**Վերանայում – Համագործակցության շրջանակներ**



Կարգավորող մարմինները և շահառուները սկսում են վերանայման գործընթացը հետևյալ պայմանների առկայության պարագայում՝

- Գույքագրումը հրապարակված է.
- Հրապարակված է յուրաքանչյուր ոլորտի վերանայման ժամանակացույցը.
- E-Guillotine էլեկտրոնային շտեմարանը պատրաստ է վերանայման փուլի համար.
- Վերանայման փուլի մեկնարկը հայտարարվել է (հրապարակայնորեն և կառավարության ներսում),

ինչը տեղի է ունեցել 2013 թ. մայիսի 8-ին:

Ստորև ամփոփված են վերանայման գործընթացի քայլերը:

**Քայլ 1.** ՕԿԱԿ-ը տրամադրում է իրավական ակտերի վերանայման ձեռնարկը կարգավորող մարմիններին և շահագրգիռ կողմերին հետևյալ միջոցներով՝

- Հրապարակելով այն [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) կայքում.
- Ուղարկելով այն էլ-փոստով.
- Բաժանելով այն վերապատրաստման դասընթացների ժամանակ:

- Կարգավորող մարմինն ՕԿԱԿ-ից ստանում է օգտագործողի անուն և ծածկագիր [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) մուտք գործելու և իրավական ակտերի վերանայման ստուգաթերթն առցանց լրացնելու համար, ինչը հնարավորություն կտա էապես խնայել ժամանակ:
- ՕԿԱԿ-ը կարգավորող մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին կտրամադրի համառոտ ուղեցույց [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) մուտք գործելու, որպես նոր օգտատեր գրանցվելու և իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը առցանց լրացնելու համար:

**Քայլ 2.** ՕԿԱԿ-ի փորձագետները վերապատրաստման դասընթացներ կանցկացնեն կարգավորող մարմինների համար, որի ընթացքում կներկայացվի.

- Կարգավորիչ Գիլյոտինի նկարագրությունը:
- Իրավական ակտերի վերանայման մոտեցումը, մեթոդները և քայլերի հերթականությունը:
- Իրավական ակտերի վերանայման ստուգաթերթի լրացումը օրինակների հիման վրա:
  - Վերապատրաստման դասընթացները կունեն կես օր: Առաջարկվում է, որ յուրաքանչյուր դասընթացին մասնակցի 15 մասնակից 3-5 նախարարությունից: Ցանկալի է, որ յուրաքանչյուր մասնակից ունենա համացանցին միացված համակարգչ՝ վարժություններ անելու համար:

**Քայլ 3.** Կարգավորող մարմինները պետք է հավաքագրեն ներքին տեղեկատվություն համապատասխան վարչություններից և փորձագետներից՝ իրավական ակտերի վերանայման ստուգաթերթերը առցանց լրացնելու համար: Տեխնիկական խնդիրներից խուսափելու համար տեխնիկական բաժինները պետք է նույնպես ներգրավված լինեն վերանայման գործընթացում:

**Քայլ 4.** Կարգավորող մարմինները պետք է ՕԿԱԿ-ի կողմից սահմանված ժամկետներում առցանց լրացնեն իրավական ակտերի վերանայման ստուգաթերթերը [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) կայքում՝ օգտագործելով ՕԿԱԿ-ի կողմից տրամադրված օգտագործողի անունը և գաղտնաբառը:

Ստուգաթերթերն առցանց լրացնելուց հետո կարգավորող մարմինները ուղարկում են դրանք ՕԿԱԿ-ին [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) կայքի միջոցով:

- Ստուգաթերթն առցանց լրացնելուց բացի կարգավորող մարմինը պետք է նաև տպի յուրաքանչյուր լրացված ստուգաթերթը:
- ՕԿԱԿ-ն ունի աջակցության էլեկտրոնային հասցե և հեռախոսահամար, որոնք նախատեսված են կարգավորող մարմիններին և շահագրգիռ կողմերին ստուգաթերթը լրացնելու հարցում աջակցելու համար: Աջակցության հեռախոսահամարը տեղադրված է [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) կայքում:

**Քայլ 5.** Կարգավորող մարմինները ՕԿԱԿ-ին տրամադրում են իրավական ակտերի վերանայման լրացված ստուգաթերթերի տպված օրինակները և ցանկացած այլ փաստաթղթեր, որոնք վերաբերվում են տվյալ իրավական ակտին կամ բիզնես գործընթացին:

- Կարգավորող մարմինները կարող են տրամադրել ՕԿԱԿ-ին հետևյալ տպագիր փաստաթղթերը՝

- լրացված վերանայման ստուգաթերթերի տպած տարբերակը.



- իրավական ակտերը և նրանց փոփոխությունները, դիմումի ձևերը, վճարումների ժամանակացույցերը.
- հավաքագրված հանրային կարծիքներ, առաջարկություններ և համապատասխան ուսումնասիրություններ, հայեցակարգ.
- առնչվող բիզնես գործընթացի նկարագիր, գծապատկեր, պահանջվող այլերի նկարագրություն և այլն:

**Քայլ 6.** Շահագրգիռ կողմերը (քաղաքացիները, բիզնեսները, ՀԿ-ները) առցանց լրացնում են իրավական ակտերի վերանայման ստուգաթերթերը:

- Շահագրգիռ կողմերը պետք է տեղեկանան ՕԿԱԿ-ի կայքից իրենց առնչվող իրավական ակտերի վերանայման ժամանակացույցի վերաբերյալ և հետևեն սահմանված ժամանակացույցին՝ իրենց առաջարկները ներկայացնելիս:
- Իրավական ակտերը վերանայելու և խորհուրդներ ձևավորելու նպատակով բիզնեսները կարող են կազմել մասնավոր հատվածի փորձագետների խմբեր:
- Շահագրգիռ կողմերը կարող են տեղեկանալ իրավական ակտերի վերանայման ժամանակացույցի վերաբերյալ ՕԿԱԿ-ի կայքից: Շահագրգիռ կողմերը կարող են կայքից ներբեռնել վերանայվող իրավական ակտերը:
- - Շահագրգիռ կողմերից ակնկալվում է հետևյալը՝
- [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) միջոցով հստակորեն և պատշաճ լրացված իրավական ակտերի վերանայման ստուգաթերթեր.
- Գործարար համայնքի, ՀԿ-ների, քաղաքացիների և միջազգային համայնքի համապատասխան փորձի ներկայացում.
- Հավաքագրված հանրային կարծիքներ, առաջարկություններ և համապատասխան ուսումնասիրություններ, հայեցակարգեր.
- Իրավական ակտերի վերացման կամ փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների լուծման գործնական առաջարկներ:
  - Ստուգաթերթերն առցանց լրացնելուց բացի շահագրգիռ կողմերը պետք է նաև տպեն յուրաքանչյուր ստուգաթերթն իրենց ներքին հաշվառման համար:
  - ՕԿԱԿ-ն ունի աջակցության էլեկտրոնային հասցե և հեռախոսահամար, որոնք նախատեսված են շահառուներին ստուգաթերթը լրացնելու հարցում աջակցելու համար: Աջակցության հեռախոսահամարը տեղադրված է [www.e-guillotine.am](http://www.e-guillotine.am) կայքում:

**Քայլ 7.** ՕԿԱԿ-ը ստուգում է առցանց կամ թղթային եղանակով ներկայացված վերանայման ստուգաթերթը

ՕԿԱԿ-ը վերանայում է տրամադրվող վերանայման ստուգաթերթերի և այլ փաստաթղթերի որակը: Այն դեպքերում, երբ վերանայման ստուգաթերթերը պատշաճ չեն լրացվել, կամ եթե բացակայում են որոշակի տվյալներ, ՕԿԱԿ-ի փորձագետները կարող են դիմել համապատասխան կարգավորող կամ շահագրգիռ մարմնի՝ պահանջելով որոշակի պարզաբանումներ:

**Քայլ 8.** ՕԿԱԿ-ը կատարում է իրավական ակտերի և բիզնես գործընթացների իր սեփական վերլուծությունը, ինչպես նաև խորհրդակցում է համապատասխան կողմերի հետ

ՕԿԱԿ-ն ուսումնասիրում է բոլոր իրավական ակտերը և բիզնես գործընթացները՝ օգտագործելով միևնույն ստուգաթերթը: Ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվում նաև այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները, ինչպիսիք են՝ միջազգային փորձագետները եւ ուղեցույցները: Անկախ և մասնագիտական վերանայում ապահովելու համար ՕԿԱԿ-ը կարող է դիմել պետական և մասնավոր հատվածների փորձագետների օգնությանն այն հատվածների դեպքում, որտեղ ՕԿԱԿ-ը չունի բավարար ռեսուրսներ:

Եթե նախարարությունը չի առաջարկել փոփոխություններ, որոնք կապահովեն ծախսերի 50% նվազեցում, ապա ՕԿԱԿ-ը կարող է նախարարության հետ քննարկել և ձևավորել թիրախին հասնելու այլ առաջարկներ:

ՕԿԱԿ-ն իրականացնում է ծախսերի բազային գնահատումը և հաշվարկում բոլոր առաջարկություններից ակնկալվող խնայողությունները, ապա հաշվարկում ծախսերի նվազեցման տոկոսը:


Անհրաժեշտ է շեշտադրել իրավական ակտերի և բիզնես գործընթացների միջև հարաբերությունը, քանի որ իրավական ակտերը հանդիսանում են բիզնես գործընթացների սկզբնաղբյուրը: Հետևաբար ՕԿԱԿ-ի վերանայման թիմերը կարող են բիզնես գործընթացները և իրավական ակտերը վերանայնել զուգահեռաբար: ՕԿԱԿ-ը կդիտարկի բիզնես գործընթացը՝ բարելավելու ամենահարմար, պակաս բարդ և կիրառելի տարբերակը:

Նման դեպքերում ՕԿԱԿ-ի փորձագետները նշումներ կանեն e-Guillotine շտեմարանում իրավական ակտի/բիզնես գործընթացի վերանայման ստուգաթերթերը լրացնելիս: Անհրաժեշտ է նաև ապահովել բիզնես գործընթացների հղումը համապատասխան իրավական ակտերին, և ընդհակառակը:

**Քայլ 9.** ՕԿԱԿ-ը ներկայացնում է վերջնական առաջարկությունների փաթեթները Բարեփոխումների խորհրդին:

Վերանայման ընթացքում ՕԿԱԿ-ի փորձագետները ձևավորում են առաջարկություն և ներկայացնում այն e-Guillotine շտեմարանում ստուգաթերթը լրացնելիս: Հետագայում այն կտպվի և կներկայացվի Բարեփոխումների խորհրդին:

# Վերանայման փուլ՝ Կարգավորիչ գիյոտինը ՀՀ-ում



## 6. Հավելված 1. Իրավական ակտի վերանայման ստուգաթերթ

### ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՏՈՒԳԱԹԵՐԹ

#### Ստուգաթերթի օգտագործման ուղեցույց

Լրացնել Իրավական ակտի վերանայման ստուգաթերթը (այսուհետ՝ Վերանայման ստուգաթերթ) բոլոր այն իրավական ակտերի կամ իրավական ակտերի դրույթների համար, որոնք ընդունվել կամ մշակվել կամ կիրարկվել են տվյալ մարմնի կողմից և որոնք պահանջում են մեկից ավելի տնտեսավարող սուբյեկտներից կամ քաղաքացիներից կատարել որևէ գործողություն՝ որպես որևիցե գործունեության իրականացման պայման (այսինքն՝ ունեն նորմատիվ բնույթ, ուղղված են իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը): Վերանայման ստուգաթերթը լրացնել հետևյալ իրավական ակտերի համար՝

▪ **Իրավական ակտեր, որոնք բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների, ՀԿ-ների կամ քաղաքացիների վրա ազդեցություն ունեն:**

Իրավական ակտերի պահանջներ, որոնց առկայության դեպքում մեկից ավելի տնտեսավարող սուբյեկտներից կամ քաղաքացիներից պահանջվում է կատարել որևէ գործողություն՝ որպես որևիցե գործունեության իրականացման պայման,

○ **Ներառված իրավական ակտերի օրինակներ.**

▪ Պահանջ, ըստ որի քաղաքացին պետք է ներկայացնի դիմում/ձևեր և կատարի վճարում/անձնագրի համար վճար:

▪ Պահանջ, ըստ որի տնտեսավարող սուբյեկտն իր աշխատողներին պետք է սովորեցնի անվտանգության կանոնները:

▪ Պահանջ, ըստ որի տնտեսավարող սուբյեկտը պետք է ենթարկվի ապրանքների ներկրման վարչական պահանջներին:

○ **Չեն ներառվում.** Անհատական ակտերը, որոնք վերաբերում են միայն մեկ տնտեսավարող սուբյեկտի կամ քաղաքացու, ինչպիսին է՝ անհատական լիցենզիայի որոշումը:

○ **Չեն ներառվում.** Ակտերը, որոնք վերաբերում են միայն համապատասխան մարմնի ներսում կամ մարմինների միմյանց միջև ներքին գործավարությանը:

#### Աղյուսակ 1. Գիյոտինի, գույքագրման և վերանայման փուլերի ամփոփում

<b>Իրավական ակտը, որը վերաբերում է</b>	<b>Գույքագրում</b>	<b>Վերանայում</b>
Ոչ-առևտրային գործունեության մեջ գտնվող մեկից ավել քաղաքացիներին կամ ՀԿ-ներին	Ներառվում է	Ներառվում է
Առևտրային գործունեության մեջ գտնվող մեկից ավել տնտեսավարող սուբյեկտներին	Ներառվում է	Ներառվում է
1. Համապատասխան մարմնի ներսում կամ մարմինների միջև ներքին գործավարությանը (իրավական ակտեր, որոնք վերաբերում են միայն օրինակ պետական հատվածի ներքին գործունեությանը)	Չի ներառվում	Չի ներառվում
2. Ազգային անվտանգությանը և պաշտպանությանը	Չի ներառվում	Չի ներառվում
3. Միայն մեկ տնտեսավարող սուբյեկտին, ՀԿ-ին կամ քաղաքացուն	Չի ներառվում	Չի ներառվում

4. Քրեական օրենսգրքին (բացառությամբ տնտեսական կարգավորումների խախտման համար սահմանված քրեական պատասխանատվություն սահմանող դրույթների)

**Չի ներառվում**

**Չի  
ներառվում**

Հարցեր	Պատասխաններ	Հրահանգներ
Իրավական ակտի անունը, # և ամսաթիվը	ՉԼՐԱՑՆԵԼ – մեխանիկորեն կգեներացվի Է-Գիլյոտին ծրագրային փաթեթի կողմից	
Է-Գիլյոտին ծրագրային փաթեթում գործի համարը	ՉԼՐԱՑՆԵԼ – մեխանիկորեն կգեներացվի Է-Գիլյոտին ծրագրային փաթեթի կողմից	Այն եզակի համար է՝ հատկացված Է-Գիլյոտին ծրագրային փաթեթի կողմից:
Իրավական ակտի տեսակը (ՉԼՐԱՑՆԵԼ – մեխանիկորեն կգեներացվի Է-Գիլյոտին ծրագրային փաթեթի կողմից)	Օրենք <input type="checkbox"/>	Այն մեխանիկորեն կգեներացվի Է-Գիլյոտին ծրագրային փաթեթի կողմից, քանի որ այն կհավաքագրվի գույքագրման փուլում:
	Նախագահի հրամանագրեր և կարգադրություններ <input type="checkbox"/>	
	Կառավարության որոշումներ <input type="checkbox"/>	
	Վարչապետի որոշումներ <input type="checkbox"/>	
	Կենտրոնական բանկի խորհրդի որոշումներ <input type="checkbox"/>	
	Կարգավորող հանձնաժողովների որոշումներ <input type="checkbox"/>	
	Նախարարների հրամաններ <input type="checkbox"/>	
	Մարզպետների որոշումներ <input type="checkbox"/>	
	Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտեր <input type="checkbox"/>	
Վերանայման (ուսումնասիրման) ենթակա դրույթները	<p>Տվյալ մարմնի համար վերանայել միայն այն դրույթները, որոնք տվյալ մարմնի լիազորությունների շրջանակում են ընդունվել կամ մշակվել կամ կիրարկվել և վերաբերում են տնտեսավարող սուբյեկտներին և քաղաքացիներին: Եթե վերանայում եք այս իրավական ակտում գտնվող բոլոր դրույթները, խնդրում եմ նշել այստեղ <input type="checkbox"/></p> <p><i>Եթե վերանայում եք ոչ բոլորը, նշել այն դրույթները, որոնք Ձեր իրավասության սահմաններում գտնվող տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների համար պահանջներ են պարունակում, բոլոր այդ հոդվածները պետք է վերանայել: Վերանայում ենք հետևյալ հոդվածները՝</i></p> <p>.....</p>	Բոլոր դրույթները, որոնք պարունակում են տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների համար պահանջներ և ընդունվել կամ մշակվել կամ կիրարկվել են տվյալ մարմնի կողմից, պետք է վերանայվեն:
Վերանայող մարմինը	.....	
Վերանայողի անունը, պաշտոնը և հեռախոսահամարը	.....	Պատասխանատու անձը պետք է կարողանա պատասխանել այս ստուգաթերթում վերանայվող իրավական ակտին վերաբերվող տեխնիկական հարցերին և աջակցել ՕԿԱԿ-ին՝ իր առաջարկություններ ի իրականացման

համար:

**ԿԱՐԴԱԼ ԱՏՈՒԳԱԹԵՐԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ՝<sup>1</sup>**

**I. Իրավական ակտն համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:**

<p>1. Իրավական ակտը, բացառությամբ օրենքի, արդյո՞ք ընդունվել է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի հիման վրա:</p>	<p>ա. Այո. <input type="checkbox"/></p> <p>Նշել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի անվանումը և դրույթը .....</p> <p>բ. Ոչ. <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, ապա պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</b></p>	<p>Պատասխանատու կարգավորող մարմինը պետք է ունենա գերակա իրավական ակտով կամ միջազգային պայմանագրով սահմանված՝ տվյալ իրավական ակտը մշակելու, ընդունելու, կիրառելու և կիրարկելու բացարձակ իրավասություն: Բացի այդ, կարևոր է, որ իրավական ակտի բովանդակությունը չգերազանցի գերակա իրավական ակտով սահմանված իրավասությունները:</p>
<p>2. Իրավական ակտը կամ դրա դրույթը հակասու՞մ է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>Եթե պատասխանը «ԱՅՈ» է, ապա նշել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի ուժի մեջ մտնելու ամսաթիվը, հոդված(ներ)ը և մասերը (կետերը). .....</p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</b></p>	
<p>3. Իրավական ակտը հրապարակվե՞լ է Պաշտոնական Տեղեկագրում:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, իրավական ակտն անօրինական է , ապա պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ եթե իրավական ակտը համապատասխանում է Ստուգաթերթի մնացած</b></p>	<p>Ամբողջական թափանցիկության սկզբունքը շատ կարևոր է ապագա տնտեսական աճի համար Հայաստանում: Սկզբունքն այն է, որ</p>

<sup>1</sup> - Հարցերին պատասխանելու համար վանդակում  նշել x:

	<p><b>բոլոր պահանջներին, ապա այն կարող է համապատասխան ընթացակարգերի միջոցով 10 շաբաթվա ընթացքում համապատասխանեցնել օրենսդրությանը:</b> <b>Առաջարկությունը հետևյալն է.</b></p> <p><input type="checkbox"/> Գործողությունը դադարեցնել – Անցեք Բաժին V.</p> <p><input type="checkbox"/> Շարունակեք լրացնել Ստուգաթերթը՝ որոշելու համար, թե արդյո՞ք իրավական ակտն անհրաժեշտ է և բիզնեսի համար բարենպաստ: Եթե այո, ապա 10 շաբաթվա ընթացքում համապատասխանեցնել օրենսդրությանը՝ հրապարակելով Պաշտոնական Տեղեկագրում:</p>	<p>Հայաստանում ոչ մի իրավական ակտ իրավաբանական ուժ չունի, եթե այն չի հրապարակված Պաշտոնական Տեղեկագրում:</p>
<p>4. Իրավական ակտը օտարերկրյա կազմակերպությունների կամ ապրանքների համար սահմանում է այլ պահանջներ, քան ՀՀ կազմակերպությունների կամ ապրանքների համար:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>Եթե պատասխանը «ա»-ն է, բացարտել. .....</p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել, եթե որևիցե կոնկրետ բացառություն չի սահմանած ԱՀԿ անդամակցության փաստաթղթերով: Եթե սահմանված է, ապա նշել այդ բացառությունն այստեղ.</b> .....</p>	<p>ԱՀԿ պարտավորություններ չի հիմնարար սկզբունք է խտրականության բացակայությունը, որը պահանջում է, որ երկիրը օտարերկրյա կազմակերպությունների, ապրանքների և ծառայությունների նկատմամբ սահմանի բացարձակ նույն պահանջները, ինչ որ տեղական կազմակերպությունների, ապրանքների և ծառայությունների համար: Այս հարցը նպատակ ունի որոշելու իրավական ակտի համապատասխանությունը ԱՀԿ-ի պահանջներին: Եթե իրավական ակտը պարունակում է տարբեր պահանջներ, ինչպիսիք են՝ թեստավորման կամ պիտակավորման պահանջները, օտարերկրյա և տեղական կազմակերպությունների, ապրանքների և ծառայությունների</p>



		<p>համար, իրավական ակտի գործողությունը պետք է դադարեցնել, եթե միայն հատուկ բացառություն չկա Հայաստանի՝ ԱՀԿ անդամակցության համաձայնագրում: Վերանայող մասնագետը պետք է նաև ուշադրություն դարձնի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- օտարերկյա ներդրողների համար խոչընդոտների առկայության վրա:</li> <li>- ընկերությունների կամ ապրանքների «ազգային» շեշտադրելու վրա: -ներկրված ապրանքների արտասահմանում գրանցված լինելու փաստի վրա: Վերանայաողը պետք է բացահայտի, թե արդյոք կա խտրականություն օտարերկյա ընկերությունների և ապրանքների հանդեպ:</li> </ul>
<p>5. Այս իրավական ակտը փոխարինվե՞լ է կամ ուժը կորցրա՞ծ է ճանաչվել ավելի ուշ ընդունված իրավական ակտի կողմից:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>Եթե պատասխանը «ա»-ն է, խնդրում են նշել ավելի ուշ ընդունված իրավական ակտի անվանումը և հրապարակման ամսաթիվը.</p> <p>.....</p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</b></p>	<p>Երբեմն իրավական ակտերը, որոնք վերանայված, փոխարինված կամ նույնիսկ ուժը կորցրած են ճանաչված ավելի ուշ ընդունված իրավական ակտի կողմից, շարունակում են գոյություն ունենալ և</p>

		<p>Երբեմն կիրառվում են: Սա շփոթություն է ստեղծում տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ պահանջների շուրջ: Այս հարցը պահանջում է Ստուգաթերթը լրացնող անձին ստուգել, թե արդյո՞ք իրավական ակտը չի վերանայվել կամ փոխարինվել ավելի ուշ ընդունված իրավական ակտի կողմից:</p>
--	--	--

<p><b>6. Հաշվի առնելով ձեր պատասխանները վերոնշյալ 1-5 հարցերին, կարծու՞մ եք, որ այս իրավական ակտը օրենսդրությանը համապատասխան է:</b></p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը Ոչ է, պետք է գործողությունը դադարեցնել կամ ընդունել նույն հարաբերությունները կարգավորող մեկ այլ իրավական ակտ: Խնդրում ենք անցնել Բաժին V և առաջարկել, թե արդյո՞ք պետք է գործողությունը դադարեցնել: Հետագա վերանայման անհրաժեշտություն չկա:</b></p>	
--	--

**Լրացուցիչ մեկնաբանություններ իրավական ակտի օրինականության վերաբերյալ՝**

.....

**II. Իրավական ակտն անհրաժե՞շտ է**

<p>7. Իրավական ակտի նպատակը հստակ է:</p>	<p>Ո՞րն է նպատակը: Ի՞նչ նպատակ է հետապնդում իրավական ակտը:</p> <p>ա. ....</p> <p>բ. Նպատակը հայտնի չէ, արդիական չէ կամ հստակ չէ</p> <p><b>Եթե պատասխանը (բ)-ն է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</b></p> <p>Եթե պատասխանը (ա) է, նպատակը դեռ արդարացված է՝ հաշվի առնելով ՀՀ ներկա տնտեսական պայմանները:</p> <p>գ. Այո <input type="checkbox"/></p> <p>դ. Ոչ <input type="checkbox"/></p>	<p>Իրավական ակտերը պետք է մշակվեն, որպեսզի ծառայեն պետական քաղաքականության նպատակներին, եթե դրանք հիմնավորվելու են որպես անհրաժեշտություն Հայաստանի ապագա կարիքների համար: Թիրախային արդյունքները պետք</p>
--	--	--

	<p><b>Եթե պատասխանը ՈՉ է պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել: Գնալ Բաժին V և առաջարկել իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</b></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, անցեք 8-րդ հարցին:</b></p>	<p>է հստակ լինեն կարգավորող մարմնի համար: Եթե նպատակները հստակ չեն, ապա հավականությունը քիչ է, որ իրավական ակտի անհրաժեշտությունը կա:</p> <p><b>Հստակ արդյունքի օրինակ.</b> Այս իրավական ակտը նախատեսված է երաշխավորելու, որ հաճախորդներին վաճառած հացի արտադրությունը սանիտարական պայմաններին համապատասխան է:</p>
<p>8. Իրավական ակտն արդյունավետ է հասնելու 7-րդ կետում սահմանված նպատակին:</p>	<p>Կա՞ն արդյոք փաստեր, որ այս իրավական ակտն իրականում հասել է իր նպատակին: Արդյո՞ք արդյունքները փաստաթղթավորվել են:</p> <p>ա. Այո, հստակ փաստեր կան, որ այն հասել է իր նպատակին: <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ, փաստեր կան, որ այն չի հասել իր նպատակին: <input type="checkbox"/></p> <p>գ. Ոչ, իր արդյունավետության մասին փաստեր չկան: <input type="checkbox"/></p> <p><b>Եթե նշել եք (բ), պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել որպես ոչ անհրաժեշտ:</b></p> <p><b>Եթե նշել եք (գ), իրավական ակտը պետք է գնահատման նպատակով օրակարգ մտցնել:</b></p>	<p>Այս կետի նպատակն է պարզել, թե արդյո՞ք այս իրավական ակտը կհասնի արդյունքին: Եթե նույնիսկ նպատակները հստակ են, իրավական ակտի վատ նախագիծը կամ վատ կիրառությունը կարող են լրացուցիչ ծախսերի տակ զցել իրավական ակտի օգտագործողներին՝ առանց որևիցե օգուտ տալու: Փաստերի բացակայությունը չի նշանակում, որ իրավական ակտը արդյունավետ չէ, մինչդեռ նրա ոչ արդյունավետ լինելու մասին վկայող փաստերը հիմք են հանդիսանում տրբայլ</p>

		<p>իրավական ակտը ուժը կորցրած ճանաչելու համար: Անհրաժեշտ է փաստաթղթավորել փաստերը և պատասխանել սույն հարցին ըստ յուրաքայրի հորվածի:</p>
<p>9. Նույնիսկ եթե իրավական ակտն անհրաժեշտ է, իրավական ակտի կիրառությունը կառաջացնի՞ էական խոչընդոտներ տնտեսվարող սուբյեկտների կամ քաղաքացիների համար:</p>	<p>ա. Այո, կիրառության հետ կապված խնդիրները լուրջ են և հաճախակի, և կատարումը ցածր է: <input type="checkbox"/></p> <p>բ. Կան կիրառության որոշակի խնդիրներ և/կամ կատարումը միջին է: <input type="checkbox"/></p> <p>գ. Ոչ, իրավական ակտը կամ դրանով սահմանված ընթացակարգը հետևողականորեն և թափանցիկորեն կիրառվում է և/կամ կատարումը լավ է: <input type="checkbox"/></p> <p><b>Եթե դուք ընտրել եք (ա)-ն, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ փոխարինել այնպիսի իրավական ակտով, որն ավելի լավ է մշակված՝ բարելավելու կիրառությունն և/կամ փաստացի կատարումը: Ինչպե՞ս կարելի է կիրառությունը բարելավել: Եթե ընտրել եք (ա) կամ (բ) պատասխանները, ապա բացատրել, թե ինչպես կարելի է բարելավել կիրառումը:</b></p> <p>.....</p>	
<p>10. Իրավական ակտերի որոշ տեսակներ խոչընդոտում են ներդրումներին, աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական աճին: Իրավական ակտը խոչընդոտում է տնտեսական գործունեությանը՝ պարունակելով հետևյալ սահմանափակումներից որևէ մեկը:</p>	<p>10.ա. Իրավական ակտը պարունակում է գների վերահսկում, բացառությամբ բնական մենաշնորհների:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ հիմնավորել, թե ինչու է այն դեռ անհրաժեշտ՝ հաշվի առնելով իր կողմից առաջացնող հավանական տնտեսական վնասները:</b></p> <p>.....</p> <p>10.բ. Իրավական ակտը սահմանափակում է մուտքը դեպի աշխատանքի կամ արտադրության շուկա, օրինակ՝ լիցենզիաների, թույլտվությունների կամ հավաստագրերի միջոցով:</p> <p>Այո <input type="checkbox"/></p> <p>Ոչ <input type="checkbox"/></p> <p>Եթե Այո, ապա արդյո՞ք այս սահմանափակումը հիմնավորված է՝ ելնելով հետևյալ նպատակներից.</p> <p>-- այն անհրաժեշտ է առողջությունը, հասարակական անվտանգությունը կամ շրջակա միջավայրը պաշտպանելու համար (օրինակ՝ քաղաքացիական ավիացիայի օդաչուների լիցենզիայի թեստեր)</p> <p>Այո <input type="checkbox"/></p>	<p>Իրավական ակտերի որոշ տեսակներ հատուկ ձևով խոչընդոտում են տնտեսվարող սուբյեկտների հետևյալ հնարավորություններին.</p> <p>բիզնես գործընթաց սկսելուն, բիզնեսի զարգացմանը, բիզնեսում նորարարություններ մտցնելուն և շուկայական պայմանների փոփոխությունների արձագանքմանը: Այս տեսակի իրավական ակտերի վերանայման գործընթացը հանդիսանում է</p>

	<p>Ոչ <input type="checkbox"/></p> <p>-- Այն օգտագործվում է հանրային սեփականություն հանդիսացող ռեսուրսների կառավարման համար (օրինակ՝ գետերի ձկները, ռադիոհաճախականությունները, պետական հողերը):</p> <p>Այո <input type="checkbox"/></p> <p>Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե մուտքի սահմանափակումը հիմնավորված չէ վերոնշյալ որևէ նպատակով, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ հիմնավորել, թե ինչու՞ է այն դեռ անհրաժեշտ՝ հաշվի առնելով իր կողմից առաջացնող հավանական տնտեսական վնասները:</b></p> <p>.....</p>	<p>նման տեսակի բարեփոխումների հիմնաքարերից մեկը: Այս հարցը կենտրոնանում է մի քանի կոնկրետ կարգավորման եղանակների վրա, որոնք հատկապես ծախսատար են և պետք է վերացվեն, եթե միայն չեն հիմնավորվում որպես կարևոր հասարակական կարևորության նպատակին հասնելու միակ միջոց: Եթե իրավական ակտը մտնում է այս կատեգորիաներից որևիցե մեկի մեջ, ապա պահանջվում է լրացուցիչ հիմնավորում՝ ցույց տալու համար, թե այն ինչի համար է անհրաժեշտ Հայաստանին, որտեղ մասնավոր հատվածից ակնկալվում է ստեղծել ավելի շատ ներդրումներ, աշխատատեղեր և աճ:</p>
	<p>10.գ. Իրավական ակտը սահմանափակում է աշխատողների ընդունման և ազատման հետ կապված հարաբերությունները.</p> <p>ե. Այո <input type="checkbox"/></p> <p>զ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ հիմնավորել, թե ինչու է այն դեռ անհրաժեշտ՝ հաշվի առնելով իր կողմից առաջացնող հավանական տնտեսական վնասները:</b></p> <p>.....</p>	
	<p>10.դ. Իրավական ակտը սահմանափակում է ապրանքների ներմուծումը կամ արտահանումը, բացի ազգային</p>	

	<p>անվտանգության նկատառումներից ելնելով: Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ հիմնավորել, թե ինչու է այն դեռ անհրաժեշտ՝ հաշվի առնելով իր կողմից առաջացնող հավանական տնտեսական վնասները:</b></p> <p>.....</p>	
	<p>10.Ե. Իրավական ակտը սահմանափակում է շուկայական մրցակցությունը, շուկայական գործունեությունը կամ մուտք դեպի շուկա, որոնք կարող են որևէ միջոցով աջակցել հորիզոնական հակամրցակցային համաձայնություններին (կարտելներին), գների սահմանմանը կամ այլ մրցակցային խախտումները: Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել կամ հիմնավորել, թե ինչու է այն դեռ անհրաժեշտ՝ հաշվի առնելով իր կողմից առաջացնող հավանական տնտեսական վնասները:</b></p> <p>.....</p>	<p>Այսպիսի սահմանափակումները կարող են ներառել արհմիությունների իրավունքը՝ իրենց անդամների համար գները հաստատուն պահելու համար, կամ սահմանափակել առևտրային գործունեությունները , կամ սահմանափակել լիցենզիաները կամ սահմանել արտադրության կամ ներմուծման վրա քվոտաներ, կամ ցանկացած այլ սահմանափակում, որն ուղղված է մրցակցային շուկա մուտքին կամ գործունեությանը:</p>
<p>11. Գոյություն ունի՞ այս իրավական ակտի ավելի քիչ ծախսատար այլընտրանք, որը կհասնի նույն նպատակին:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/> Եթե ԱՅՈ, նկարագրել այլընտրանքը, գնահատել ծախսերի խնայողությունները և նշել, թե ո՞վ կօգտվի ծախսերի խնայողություններից՝ տնտեսավարող սուբյեկտները, քաղաքացիները կամ դրանց որևիցե համակցությունը: .....</p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p>	
<p>12. Հաշվի առնելով ձեր պատասխանները վերոնշյալ 7-11 հարցերին՝ արդյո՞ք այս իրավական ակտի անհրաժեշտությունը կա:  ա. Այո <input type="checkbox"/></p>		<p>Վերանայողը պետք է իրավական ակտի հետագա անհրաժեշտության վերաբերյալ հստակ</p>

<p><b>բ. Ոչ</b> <input type="checkbox"/></p> <p><b>գ. Պետք է փոխարինվի ավելի քիչ ծախսատար կամ ավելի լավ կիրառելի այլընտրանքով:</b> <input type="checkbox"/></p> <p><b>դ. Իր ազդեցությունները պետք է շարունակվեն գնահատվել:</b> <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը բ-ն կամ գ-ն է, պետք է գործողությունը դադարեցնել կամ փոխարինել կամ վերանայել: Եթե դուք առաջարկում եք, որ պետք է ամբողջությամբ գործողությունը դադարեցնել, անցնել Բաժին V և առաջարկել դադարեցնել գործողությունը: Հետագա վերանայման անհրաժեշտություն չկա:</b></p>	<p>Եզրակացության հանգի՝ հաշվի առնելով, թե արդյոք այն արդյունավետ է սահմանված նպատակներին հասնելու համար և արդյոք այն անտեղի ծախսատար է՝ հետագա աճի և աշխատատեղերի ստեղծման համար:</p>
---	---

**Լրացուցիչ մեկնաբանություններ իրավական ակտի անհրաժեշտության մասին՝**  
 .....

**III. Իրավական ակտը գործարար միջավայրի համար ունի՞ բարենպաստ ազդեցություն:**

<p>13. Իրավական ակտը մասամբ համընկնում, կրկնում կամ հակասում է՞ (բացառությամբ այն դեպքերի, երբ խնդիրը կարգավորված է օրենսդրությամբ) մեկ այլ իրավական ակտի բովանդակությամբ:</p>	<p><b>ա. Այո</b> <input type="checkbox"/></p> <p><b>բ. Ոչ</b> <input type="checkbox"/></p> <p><b>Եթե դուք նշել եք ԱՅՈ, պետք է գործողությունը դադարեցնել կամ վերանայել կամ միավորել այլ իրավական ակտի հետ:</b></p> <p>Խնդրում ենք բացատրել և նշել մյուս իրավական ակտ(եր)ը.      .....</p>	<p>Բիզնեսի վերաբերյալ ամենատարածված բողոքներից մեկն այն է, որ մի քանի իրավական ակտեր կրկնում կամ հակասում են միմյանց: Այս բարեփոխման նպատակը և բարեփոխումների լայն շրջանակների պատճառն այն է, որ պարզվի, թե որտեղ են իրավական ակտերը փոխազդում այնպես, որ ավելացնում են բիզնեսով զբաղվելու ծախսերն ու ռիսկերը: Հնարավոր լուծումների թվում իրավական ակտերի միաձուլումը կամ ուժը կորցրած ճանաչելն է:</p>
--	--	--

<p>14. Այս իրավական ակտը հստակորեն սահմանում է լիազորմամբինը, որը պատասխանատու է այս իրավական ակտը կիրառելու համար՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նկատմամբ:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, այս իրավական ակտը պետք է վերանայվի, որպեսզի հստակորեն սահմանի լիազորմամբինը, որը պատասխանատու է այս իրավական ակտը կիրառելու համար: Խնդրում եմ նշել, թե ինչպես վերանայել</b></p> <p>.....</p>	
<p>15. Տնտեսավարող սուբյեկտների համար այս իրավական ակտը պարզ և հստակ է, այն հստակորեն սահմանում է թե ինչպես պետք է կիրառվի:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, այս իրավական ակտը պետք է պարզեցնել կամ հստակեցնել: Խնդրում եմ նկարագրել, թե ինչպես վերանայել այն:</b></p> <p>.....</p>	<p>Այս հարցը վերանայողից պահանջում է ստուգել, թե իրավական ակտն իրականում հարմար է կիրառել օգտագործողի համար. (տնտեսավարող սուբյեկտներ, քաղաքացիներ, օրենքը կիրառող պաշտոնյաներ՝ ինչպիսիք են՝ տեսուչները և վերահսկողության իրականացնող այլ անձիք): Այս հարցը վերանայողին նաև հնարավորություն է տալիս առաջարկելու իրավական ակտը պարզեցնելու ուղիներ:</p>
<p>16. Եթե իրավական ակտը տնտեսավարող սուբյեկտներից, ՀԿ-ներից կամ քաղաքացիներից պահանջում է կարգավորող մարմնին ներկայացնել տեղեկատվություն, պահանջվող այդ տեղեկատվությունը ողջամիտ է՞, այն չի՞ կրկնվում և անհրաժեշտ է:</p>	<p>Տեղեկատվությունը ողջամիտ և անհրաժեշտ է:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, խնդրում եմ նշել պատճառները և առաջարկել, թե ինչպես այն կարող է պարզեցվել</b></p> <p>.....</p>	



	<p>Պահանջվող տեղեկատվությունն առկա՞ է այլ մարմիններում:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը Այո է, խնդրում եմ նշել այն մարմինները, որոնք ունեն այդ տեղեկատվությունը և բացատրել, թե ինչպես մարմինները կարող են փոխանակվել այդ տեղեկատվությամբ</b></p> <p>.....</p> <p><b>ՄԻԱՅՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.</b> Քանի՞ առանձին դիմումներ եք ստացել տնտեսավարող սուբյեկտներից, ՀԿ-ներից կամ քաղաքացիներից 2011թ. և 2012թ.:</p> <p>2011 ..... 2012 .....</p>	
<p>17. Այս իրավական ակտն ապահովում է տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքներ, որպեսզի կարողանան նոր բիզնեսներ սկսել կամ աշխատանք գտնել:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը Ոչ է, պետք է գործողությունը դադարեցնել կամ վերանայել այն, որպեսզի նվազեն գեղեցության հարցերի նկատմամբ բացասական ազդեցությունները: Այստեղ նշել, թե իրավական ակտն ինչպե՞ս է վերանայվելու.</b></p> <p>.....</p>	
<p>18. Եթե այս իրավական ակտը սահմանում է լիցենզիայի կամ թույլտվության տրամադրման պահանջ և լիցենզիան կամ թույլտվությունն անհրաժեշտ է՝ համաձայն հարց 9.բ.-ի:</p>	<p>18ա. Կարո՞ղ է սովյալ գործունեությունն իրականացնել առանց լիցենզիայի կամ թույլտվության, օրինակ՝ սահմանվի ընդհանուր կարգավորումներ և ստուգումներ բիզնեսի գործունեության ընթացքում:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>18բ. Կարո՞ղ է լիցենզիան կամ թույլտվությունը փոխարինվել կարգավորող մարմնին պարզ ծանուցմամբ:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>18գ. Կարո՞ղ է լիցենզիան կամ թույլտվությունը փոխարինվի վճարով՝ առանց պետական մարմնից որևիցե պատասխան ստանալու:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p>	<p>Պահանջները, որոնք ավելացնում են բիզնեսի ծախսերը մինչև իրենց բուն գործունեությունն սկսելը, ամենավնասակարն են փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների համար: Այս կետը նպատակ է հետապնդում պարզելու, թե արդյո՞ք լիցենզիան կամ թույլտվությունը կարող են փոխարինվել այնպես, որ բիզնեսով զբաղվելու</p>

	<p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>18.դ. Կարող է լիցենզիան կամ թույլտվությունը անժամկետ լինել:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>18.ե. Եթե այն չի կարողանա ժամկետ լինել, լիցենզիայի կամ թույլտվության գործողության ժամկետը առնվազն 5 տարի՞ է:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե 18 ա, բ, գ կամ դ-ի պատասխանը ԱՅՈ է, առաջարկել համապատասխան բարեփոխումը:</b></p> <p>.....</p> <p><b>Եթե 18 ե-ի պատասխանը ՈՉ է, փոխել լիցենզիայի կամ թույլտվության գործողության ժամկետը և դարձնել առնվազն 5 տարի կամ բացատրել, թե ինչու՞ է ավելի հաճախակի լիցենզավորումն կամ թույլտվության տրամադրումն անհրաժեշտ:</b></p> <p>.....</p> <p><b>ՄԻԱՅՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.</b> Քանի՞ լիցենզիայի կամ թույլտվության դիմումներ եք ստացել բիզնեսներից, ՀԿ-ներից կամ քաղաքացիներից 2011թ. և 2012թ.:</p> <p>2011թ. ....</p> <p>2012թ. ....</p>	<p>խոչընդոտները վերացվեն:</p> <p>Օրինակ՝ շատ երկրներ վերացնում են նախքան բիզնեսն սկսելու պահանջները, և դրանք փոխարինում են ընդհանուր կարգավորման պահանջներով, որոնք կիրառվում են միայն բիզնեսի գործունեությունը սկսվելուց հետո վերստուգողների կամ դատարանների կողմից: Սա մեծապես նվազեցնում է մուտքի խոչընդոտները և ավելացնում է ներդրումները և նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը: Վերանայողը պետք է որոշի, թե երբ մինչև բիզնեսը սկսելու ընթացակարգերի անհրաժեշտությունը կա (ապահովության, առողջական և բնապահպանական ռիսկերից խուսափելու համար) և թե երբ դրանք կարող են փոխարինվել ընդհանուր կարգավորման պահանջներով:</p>
--	--	---

<p>19. Պետական մարմնի կողմից ցանկացած պատասխան տալու վերջնաժամկետները սահմանված են այս իրավական ակտում:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, իրավական ակտը պետք է պատասխանի համար վերջնաժամկետ սահմանի ոչ ավելի, քան 21 աշխատանքային օր (եթե հարցը կարգավորված չէ օրենսդրությամբ): «Լռությունը Համաձայնություն է» մոտեցումը պետք է կիրառվի, որպեսզի ապահովվի 21 աշխատանքային օր իրական վերջնաժամկետը:</b></p> <p><b>Եթե ա. կետի համար պատասխանը ԱՅՈ է, ինչքա՞ն է պատասխանի համար անհրաժեշտ պարտադիր ժամկետ:</b></p> <p>.....</p> <p>գ. Հնարավո՞ր է այս ժամկետը նվազեցնել:</p> <p>Այո <input type="checkbox"/>                      Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե ՈՉ, ապա խնդրում եմ բացատրել, թե ինչու այն չի կարելի նվազեցնել մինչև 21 աշխատանքային օր</b></p> <p>.....</p>	<p>Կարգավորող մարմինների կողմից պատասխանների ուշացումներն ու ձգձգումները ավելացնում են բիզնեսի ծախսերը և ռիսկերը: Բարեփոխումը պատասխանների համար կստեղծի հատուկ վերջնաժամկետներ, որոնք կլինեն հնարավորինս չափ սեղմ և հնարավորություն կընձեռեն տնտեսավարող սուբյեկտին բիզնեսի գործունեությունը սկսելուց խուսափելու ավելորդ ուշացումներից: «Լռությունը համաձայնության նշան է» նշանակում է, որ պետական մարմինն իրավունք ունի ասելու «ոչ» 21 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե 21 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չի տրվում, մեխանիկորեն պատասխանը «այո» է, և մարմինը պարտավոր է տրամադրել գործունեության համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերը:</p>
---	--	---

<p>20. Գոյություն ունե՞ն այս իրավական ակտի կիրառման հետ կապված ձևեր/հարցաթերթիկ-ներ, որոնք հեշտ է գտնել, հասկանալ, կիրառել և լրացնել:</p>	<p>ա. Ձևեր անհրաժեշտ չեն <input type="checkbox"/></p> <p>բ. Այո <input type="checkbox"/></p> <p>գ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե դուք նշել եք ՈՉ, ապա ձևերը պետք է վերացնել կամ պարզեցնել, որպեսզի դրանք լինեն հասկանալի և հեշտ լրացնելու համար:</b></p> <p>Առցանց ձևն առկա՞ է ներբեռնելու համար:</p> <p>դ. Այո <input type="checkbox"/></p> <p>ե. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե ՈՉ, ապա ձևը պետք է տեղադրել կարգավորող մարմնի պաշտոնական կայքում՝ ներբեռնելու համար՝ սահմանելով կատարման ժամկետը և պաշտոնական կայքի հասցեն:</b></p> <p>.....</p>	<p>Սահմանված ձևերը պետք է լինեն պարզ և հեշտ լրացնելու համար:</p> <p>Նրանք պետք է ունենան պարզ ֆորմատ, լինեն ներդաշնակ՝ տեղեկատվությունը կիսելու համար:</p> <p>Սույն ձևերը լրացնելու համար պահանջվող ժամանակը պետք է հասցնել նվազագույնի՝ նրանք պարզեցնելու միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ապահովել սույն ձևերի առկայությունը առցանց, ինչպես նաև դրանք առցանց ուղարկելու հնարավորությունը:</p>
<p>21. Այս իրավական ակտով կարգավորվող հարաբերությունների համար պահանջվո՞ւմ է նաև այլ իրավական ակտի(երի) կիրառում:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը Այո է, կարո՞ղ է մեկ պատուհանի սկզբունքը նպատակահարմար լինել կիրառելու այս իրավական ակտի նկատմամբ, որպեսզի նվազեցվի բեռը ֆիզիկական անձանց և կազմակերպությունների վրա:</b></p> <p>գ. Այո <input type="checkbox"/></p> <p>դ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, խնդրում եմ նշել, թե ինչպես կիրառել մեկ պատուհանի սկզբունքը և առաջարկել կիրառող մարմինը և ժամկետները</b></p> <p>.....</p>	<p>Մեկ թույլտվություն ստանալու համար բազմաթիվ գրասենյակներ այցելությունը խլում է ռեսուրսներ շահագրգիռ կողմերից:</p> <p>Կառավարությունը պետք է ապահովի, որ «փաստաթղթերը շարժվեն, և ոչ թե քաղաքացիները»:</p> <p>Վերանայողը պետք է նաև ծանոթանա Համաշխարհային բանկի Doing Business հաշվետվությունը պարզելու համար, արդյոք բիզնես գործընթացը լավ է մշակված այլ</p>

		Երկրների համեմատ:
<p>22. Կա՞ն որևիցե բողոքներ կամ մեկնաբանություններ՝ կապված այս իրավական ակտի կիրառման բարդության, խոչընդոտների և ծախսատարության հետ:</p>	<p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, խնդրում եմ ամփոփել մեկնաբանությունները և առաջարկել, թե ինչպես իրավական ակտը կարելի է պարզեցնել</b></p> <p>.....</p>	<p>Եթե վերանայողը տեղյակ է իրավական ակտի հետ կապված բարձրաձայնված այլ մտահոգությունների ն, այդպիսի մտահոգությունները և լուծումները պետք է այստեղ գրառվեն: Բողոքները կարող են ներառել՝</p> <ul style="list-style-type: none"> <li>-Սահմանված ձևերը պատրաստելու և պահանջվող տեղեկատվությունը հայթայթելու, ինչպես նաև նրանց հետ կապված գործընթացները ավարտելու հարցում:</li> <li>-Կապիտալ ծախսեր (նոր համակարգիչներ, սարքավորումներ)</li> <li>-Պետական մարմիններից որոշումների կայացման հետ կապված ուշացումներ:</li> <li>-Բիզնես գործընթացի ավարտից հետո ստուգումների հետ կապված դժվարություններ:</li> </ul>
<p>23. Կոռուպցիոն ռիսկերը նվազեցվա՞ծ են:</p>	<p>Իրավական ակտը տեղեկատվություն պահանջելու, դրույթները մեկնաբանելու կամ պատասխանները հետաձգելու հետ կապված հայեցողական մոտեցման տեղ թողե՞լ է կարգավորող մարմիններին:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ԱՅՈ է, գնահատել վճարումների հետ կապված դրամական բեռը և ինչպես կարելի է</b></p>	

	<p><b>իրավական ակտը կամ դրա կիրառությունը վերանայել, որպեսզի նվազեցնել այդ ռիսկերը:</b></p> <p>.....</p>	
--	--	--

<p><b>24. Հաշվի առնելով ձեր պատասխանները վերոնշյալ 13-23 հարցերին՝ այս իրավական ակտը գործարար միջավայրի համար ունի՞ բարենպաստ ազդեցություն:</b></p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p><b>Եթե պատասխանը ՈՉ է, այս իրավական ակտը պետք է պարզեցնել կամ գործողությունը դադարեցնել: Բաժին V-ում բացատրել, թե ինչպես դա անել:</b></p>	<p>Վերանայողը պետք է հստակ եզրակացության հանգի, թե արդյո՞ք իրավական ակտը կարելի է պարզեցնել կամ փոխարինել:</p>
---	--

**IV. Վճարները խելամի՞տ են և հիմնվա՞ծ են ծառայություն մատուցելու իրական ծախսերի վրա:**

<p>25. Կա՞ն որևէ վճարներ (բացառությամբ քրեական կամ վարչական տուգանքներից), որոնք պետք է վճարել, երբ իրավական ակտը կիրառվում է:</p> <p>ա. Այո <input type="checkbox"/></p> <p>բ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>Եթե պատասխանը ԱՅՈ է, խնդրում են նշել յուրաքանչյուր ծառայության/գործարքի համար սահմանված դրույքաչափը, ծառայությունների/գործարքների թիվը և վճարն(եր)ի ամբողջական գումարը՝ 2011 և 2012 թթ. հավաքագրված պետության կամ համայնքի կողմից.</p> <p>.....</p> <p>Ընդհանուր հավաքագրված վճարները՝</p> <p>2011 թ. ....</p> <p>2012 թ. ....</p> <p>Վճարների դրույքաչափն խելամի՞տ է (այսինքն, արտահայտու՞մ է պետության կամ համայնքի կողմից ծառայության մատուցման հետ կրած իրական ծախսերը)</p> <p>գ. Այո <input type="checkbox"/></p> <p>դ. Ոչ <input type="checkbox"/></p> <p>Եթե պատասխանը ՈՉ է, խնդրում են առաջարկել վճարների ավելի խելամիտ դրույքաչափ</p> <p>.....</p>		<p>Տնտեսավարող սուբյեկտներին և քաղաքացիներին մատուցած ծառայությունների համար գանձված վճարները չպետք է հանդիսանան հարկերի գանձման կամ եկամտային աղբյուր, այլ պետք է արտացոլեն բարձրորակ ծառայության մատուցման համար պահանջվող իրական ծախսերը: Իրական ծախսերը ներառում են պետական կամ համայնքային ծառայողների աշխատավարձերը, վերադիր ծախսերը և ուրիշ այլ ծառայության մատուցման համար անհրաժեշտ խելամիտ ծախսեր: Անհրաժեշտ է նաև ուշադրություն</p>
--	--	--

		<p>դարձնել, արդյոք սահմանված վճարները շատ բարձր են փոքր ու միջին բիզնեսների համար և մատչելի են միայն խոշոր բիզնեսների համար:</p>
<p><b>V. Առաջարկություններ</b></p>		
<p><b>26. Վերանայված այս իրավական ակտը կամ դրույթը (Նշել միայն մեկ առաջարկություն)</b></p>		<p>Վերանայողը պետք է հստակ որոշի և ընտրի երեք տարբերակներից մեկը՝ հիմնվելով 1-25 հարցերի պատասխանների վրա:</p>
<p><input type="checkbox"/> Լիովին համապատասխանում է այս ստուգաթերթում տեղ գտած չափանիշներին և պետք է պահպանվի առանց փոփոխությունների</p>		
<p><input type="checkbox"/> Կհամապատասխանի չափանիշներին, եթե փոփոխության ենթարկվի կամ լրացվի և միայն պետք է պահպանվի փոփոխությունների և/կամ լրացումների հետ միասին, որոնք նշված են այստեղ .....</p>		
<p><input type="checkbox"/> Չի համապատասխանում չափանիշներին և պետք է գործողությունը դադարեցնել  <input type="checkbox"/> Ամբողջությամբ  <input type="checkbox"/> Մասնակիորեն (նշել այն դրույթները, որոնց գործողությունը պետք է դադարեցնել).          .....  <input type="checkbox"/> Ներկայումս անօրինական է, քանի որ հրապարակված չէ Պաշտոնական Տեղեկագրում, բայց անհրաժեշտ է՝ համաձայն Ստուգաթերթի 2-րդ բաժնի:          Նշել իրավական ակտի օրինականացման թիրախային ամսաթիվը և պատասխանատու անձին .....          և իրավական ակտը բիզնես միջավայրին նպաստավոր դարձնելու համար անհրաժեշտ վերանայումները:          .....</p>		

## 7. Հավելված 2: Վերանայման փուլին վերաբերող կարևոր գործողություններ և խնդիրներ

- Իրավական ակտերի և բիզնես գործընթացների առաջնահերթություն որոշելը

Հարց: Ո՞ր իրավական ակտերը/բիզնես գործընթացները վերանայել առաջին հերթին:

ՕԿԱԿ-ի փորձագետները կորոշեն, թե որոնք են բիզնեսների, քաղաքացիների և ՀԿ-ների գործունեության վրա ամենամեծ ազդեցությունը ունեցող իրավական ակտերը և բիզնես

գործընթացները՝ հիմնվելով գործարարներից և այլ համապատասխան աղբյուրներից ստացված տեղեկությունները: Առաջնահերթությունը կորոշվի շահագրգիռ կողմերի կողմից արված մեկնաբանությունների քանակի հիման վրա: Բացի այդ, ՕԿԱԿ-ի փորձագետները նույնպես ինքնուրույն կորոշեն առաջնահերթային կարևորություն ունեցող լրացուցիչ իրավական ակտերը և բիզնես գործընթացները: Առաջնահերթությունը կարող է նաև որոշվել ԳԽԽ-ի կողմից խնդիրների դասակարգման հիման վրա (առավել խնդրահարույց պահանջները պետք է վերանայվեն առաջին հերթին), քանի որ տվյալ իրավական ակտերի փոփոխությունը կարող է ունենալ էական արդյունքներ:

Իրավական ակտերի և բիզնես գործընթացների առաջնահերթությունը նշվում է e-Guillotine շտեմարանում մուտքագրված յուրաքանչյուր իրավական ակտի կամ բիզնես գործընթացի գործում: Իրավական ակտերի և բիզնես գործընթացների առաջնահերթությունը պետք է որոշվի հետևյալ տեսանկյուններից.

- Տնտեսական կարևորություն (ազդեցության շրջանակները)
- Բիզնես միջավայրի համար անբարենպաստ (ազդեցության շրջանակները)
- Բարեփոխումներ իրականացնելու հնարավորությունը
- Իրավական ակտի ընդունման ամսաթիվ (երկար ժամանակ առաջ սահմանված պահանջները կարող են լինել ոչ արդիական)
- ԱՄԿ-ի անդամ դառնալու կամ այլ կարևոր միջազգային կառույցի անդամակցության:

- Վերանայման փուլում իրականացվող խորհրդատվությունը (ՕԿԱԿ, ԳԽԽ)

Իրավական ակտերի և բիզնես գործընթացների վերանայման գործընթացը կլինի արդյունավետ միայն շահագրգիռ կողմերի մասնակցության և





համապատասխան տեղեկատվության տրամադրման դեպքում, քանի որ ՕԿԱԿ-ի փորձագետները չեն կարող ունենալ տեղեկատվություն տվյալ իրավական ակտ/բիզնես գործընթացի՝ բիզնեսների, քաղաքացիների և ՀԿ-ների վրա իրական ազդեցության մասին: Նման խորհրդատվությունը հնարավորություն կտա.

- Անրադառնալ շահագրգիռ կողմերի կարիքներին և արտացոլել դրանք առաջարկություններում:
- Մասնակցել կերտման գործընթացում:
- Ապահովել պետական հատվածի թափանցիկությունը և հաշվետվողականությունը:
- Մեծացնել պետական և մասնավոր հատվածների միջև հաղորդակցությունը և համագործակցությունը:
- Ներդնել նոր գաղափարներ և հեռանկարներ:
- Խնայողություններ անել՝ չնախատեսված ծախսերը կանխելու միջոցով:
- Ավելի ճշգրիտ դարձնել ծախսերի ազդեցության գնահատումը:

ՕԿԱԿ-ի փորձագետները կանցկացնեն մի շարք խորհրդատվություններ պետական կառավարման մարմինների և շահագրգիռ կողմերի հետ, որոնց կարծիքը կարևոր են վերանայվող իրավական ակտերի իրական ազդեցությունը հասկանալու համար:


Ծախսերի գնահատման մեթոդ – Ազդեցության գնահատում

ՕԿԱԿ-ի փորձագետները հաշվարկելու են բարձր առաջնահերթություն ունեցող իրավական ակտերից և բիզնես գործընթացներից բխող ծախսերի ազդեցությունը: Այս նպատակով Scott Jacobs միջազգային փորձագետների կողմի մշակվել է ծախսերի ազդեցության հաշվարկման հատուկ մեթոդ:

**Խորհրդատվություններին նախապատրաստում**

**Ծանոթացրեք վարչական գործընթացների հիմքերին և քննարկեք այն բարելավելու ուղիները**

Խնդրի հայտնաբերում





ՕԿԱԿ-ի փորձագետները կարող են ըստ անհրաժեշտության  
փոփոխություններ  
կատարել տվյալ փաստաթղթում՝ բարեփոխումների արդյունքների  
բարելավելու  
նպատակով: